

Հիդրոէներգետիկան որպես ՀՀ Սյունիքի մարզի Գորիս և Միսիան համայնքների տնտեսության գերակա ուղղություն, դրա բնապահպանական և սոցիալական հետևանքները

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ռոզա Զուլհալյան, փորձագետ

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավում: Մարզի տարածքը 4506 քառ. կմ է, կազմում է Հանրապետության տարածքի մոտ 15.1%-ը, Բնակչության թիվը՝ 140.3 հազար մարդ, համայնքների թիվը՝ 8, ունի 138 բնակավայր, որից 7-ը քաղաքային, 131-ը գյուղական: Սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի թիվը կազմում է 108, սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության Նախիջևանի ինքնավար մարզի հետ¹:

Խոհրդային տարիներին բացի հանքարդյունաբերության ոլորտից մարզում զարգացած էր թեթև և սննդի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Ընտանեկան նպաստ ստացողների թիվը 2020թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ կազմել է 1813, որից Կապանի տարածաշրջան՝ 330, Գորիսի տարածաշրջան՝ 868, Միսիանի տարածաշրջան՝ 480, Մեղրիի տարածաշրջան՝ 135: Նույն ժամանակ սոցիալական աջակցության նպաստ է ստացել 1065 անձ, որից Կապանի տարածաշրջանից՝ 521, Գորիսի տարածաշրջանից՝ 319, Միսիանի տարածաշրջանից՝ 115, Մեղրիի տարածաշրջանից՝ 110:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերության, հիդրոէներգետիկայի և գյուղատնտեսության ճյուղերն են: Արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Կապանի և Մեղրու տարածաշրջաններում, իսկ գյուղատնտեսությունը՝ Միսիանի և Գորիսի տարածաշրջաններում: Մեղրիում զարգացած է նաև պտղաբուծությունը:

Համայնքների խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնական մասն ունի 40-45 և ավելի տարվա հնություն և ենթակա է հիմնանորոգման: Մարզում չկան կեղտաջրի մաքրման կայաններ: Արդյունքում համակարգերի հաճախակի վթարների հետևանքով լուրջ խնդիրներ են առաջանում բնակչությանը նորմերին համապատասխան ջրամատակարարում ապահովելու հարցում: Ի լրումն նշվածի՝ ջրառի գլխամասային կառույցներում բացակայում են սանիտարական պահպանման գոտիները, իսկ բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում: Այդ ամենով պայմանավորված՝ վերջին տարիներին մարզում ավելացել են ջրի միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդացության դեպքերը:

¹<http://syunik.mtad.am/files/docs/45139.pdf>

ՀՀ Սյունիքի մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր, որոնցից առավել խոշորներն են Որոտանը, Ողջին և Մեղրին: Մարզի ջրամբարներն են Սպանդարյանի (ջրատարողությունը՝ 257 միլիոն մլն մ³), Տոլորսի (96.0 միլիոն մլն մ³), Շամբի (13.6 միլիոն մլն մ³), Անգեղակոթի (3.4 մլն մ³) և Գեղիի (15 միլիոն մլն մ³) ջրամբարները:

Մարզի գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացված է բուսաբուծության (հացահատիկ, կերային մշակաբույսեր, կարտոֆիլ և այլն), ինչպես նաև անասնապահության ուղղությամբ:

Մարզի գյուղատնտեսական նշանակության 43,9 հազ. հա տարածքից 2019 թվականին գյուղատնտեսական արտադրության կազմակերպման համար օգտագործվել է 19,9 հազ. հա-ն: Մարզի, մասնավորապես Գորիս և Սիսիան համայնքների գյուղատնտեսական հողերի ոռոգումը կատարվում է «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի ջրամբարների և «Տաթև» ՀԷԿ-ի օրվա կարգավորող ջրամբարից (Որոտանի մայր ջրանցք) ու Քարահունջի ջրամբարից սնվող ջրանցքներով, գետերի և նրանց վտակների ջրերով: Սակայն քանի որ ջրամբարները հիմնականում տեղաբաշխված են գետերի միջին և ստորին հոսանքներում և որ վարելահողերի հիմնական մասը գտնվում է ջրամբարներից վերև, այդ իսկ պատճառով ոռոգելի վարելահողերը ջուրը ստանում են մեխանիկական պոմպերի միջոցով, կամ ինքնահոս եղանակով:

Ոռոգման սեզոնին տարածաշրջանում առաջանում է ջրի դիֆիցիտ, ինչը պայմանավորված է ինչպես ոռոգման ցանցի ընդհանուր մաշվածությամբ, այնպես էլ այլ ջրօգտագործողների, մասնավորապես՝ Որոտանի ՀԷԿ համալիրի և ՓՀԷԿ-երի կողմից օգտագործվող ջրի ջրառի սահմանափակումների չպահպանմամբ: Գործող խոշոր և փոքր ՀԷԿ-երի ջրառի հետևանքով գետերի առանձին հատվածներում նույնպես չի պահպանվում էկոլոգիական թողքը, ինչը քանակական առումով ճնշում է գործադրում գետերի վրա հետևյալ հատվածներում՝

- Որոտանի գետավազան. Որոտան գետի՝ Սպանդարյանի ջրամբարից մինչև Անգեղակոթի ջրամբար և Շամբի ջրամբարից մինչև Տաթև ՀԷԿ, Սիսիան գետի՝ Տոլորսի ջրամբարից մինչև գետաբերան, Ծղուկ գետի՝ մոտ 2550 մ բարձրությունից ՓՀԷԿ-ի ջրառի կետից մինչև գետաբերան, Շաքի գետի՝ Շաքի ՓՀԷԿ-ից մինչև գետաբերան ընկած հատվածներ, ինչպես նաև Ողջի, Մեղրի գետերի գետավազանները:

Արցախյան պատերազմով պայմանավորված՝ մարզում ծագել են հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Մարզը կրել է ոչ միայն մարդկային կորուստներ, այլ նաև զգալի վնաս է հասցվել գյուղատնտեսության ոլորտին՝ թե՛ հողային ֆոնդի կոտուստ, թե՛ անասնազրկաքանակի և գյուղտեխնիկայի կորուստ (ներկայումս ճշգրտվում են կրած վնասների չափերը և այն պատրաստ լինելուց հետո ըստ փաստացի արդյունքների կիրականցվեն կոնկրետ միջոցառումներ):

Սյունիքի մարզում 2020 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված թվով 27 սուբվենցիոն ծրագիր՝ ընդհանուր 8.48 միլիարդ դրամ նախահաշվային արժեքով: 2020 թվականի ընթացքում սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով կնքվել են 6.57 միլիարդ դրամի պայմանագրեր: Ծրագրերից 2020 թվականի ընթացքում ամբողջությամբ չեն իրականացվել 19-ը՝ պայմանավորված հանրապետությունում հայտարարված ռազմական և արտակարգ դրությամբ: 2021 թվականի մարտ ամսին, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 16.11.2006թ. N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի, Սյունիքի մարզի համայնքներից Սյունիքի մարզպետարան է ուղարկվել համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի 23 սկզբնական հայտ՝ 5,2 միլիարդ ՀՀ դրամ նախնական արժողությամբ: Նշված սուբվենցիոն հայտերը միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանն արժանանալու կամ մերժվելու համար համապատասխան կից գրություններով ուղարկվել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն²:

Կլիմայի փոփոխության ազդեցությունն արդեն իսկ նկատելի է մարզի տարածքի ջրային ռեսուրսների վրա, մասնավորապես՝ տեղի օդերևութաբանական կայաններում կատարվող սիստեմատիկ դիտարկումները փաստում են, որ վերջին տարիներին տեղի է ունենում օդի տարեկան միջին ջերմաստիճանի աճ 1961-1990թթ. միջին աճի նկատմամբ: Սեզոնային միջին ջերմաստիճանի առավելագույն շեղումը նորմայից դիտվել է ամռանը 0,4-1,6⁰C-ով, գարնան և աշնան ամիսներին ջերմաստիճանն աճել է 0,5⁰C-ով, իսկ ձմռանը՝ 0,3⁰C-ով: Նույն կայաններում կատարված չափագրումների վերլուծությունները ցույց են տվել, որ տարածաշրջանում մթնոլորտային տեղումների տարեկան քանակները նույնպես ունեն նվազման միտում մինչև 13%-ով, իսկ ձյան տեղումները՝ միջինը 23%-ով: Որոտանի գետավազանի ակունքային և միջին հոսանքներում նկատվել է գետերի բնական հոսքերի 1-3% նվազում, իսկ ստորին հոսանքներում դիտվել է հոսքի աճ 12%-ով, ինչը բացատրվում է տվյալ հատվածներում անտառային ծածկույթի առկայությամբ: Ըստ ՄԱԶՕ Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության ջրի որակի հարցերով փորձագետ Լիանա Մարգարյանի՝ Կլիմայի գլոբալ տաքացման կանխատեսումներով՝ Գեղի գետի ակունքում բնական հոսքը 2040թ., 2070թ. և 2100թ. համար համապատասխանաբար կնվազի՝ 5-8%-ով, 10-15%-ով և 18-25%-ով, իսկ Մեղրի գետի ակունքում բնական հոսքերի նվազումը 2040թ., 2070թ. և 2100թ. համար համապատասխանաբար կկազմի՝ 8-9%, 16% և 26-27%³: ՀՀ կառավարության կողմից ի թիվս այլ մարզերի Սյունիքի մարզում նույնպես իրականացվում և նախատեսվում են կլիմայի փոփոխության հարմարվողականության մի շարք ծրագրեր⁴:

² <http://syunik.mtad.am/files/docs/53333.pdf>

³ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13130/>

⁴ <https://www.ecolor.org/files/uploads/ecolorsummeryreportfinal18062021.pdf>

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն՝ 2019թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա է արտադրել 56 փոքր ՀԷԿ, տարեկան մոտ 272,1 մլն.կվտժ էլեկտրաէներգիայի օգտակար առաքմամբ և 92362,2 կՎտ ընդհանուր հզորությամբ: Միննույն ժամանակ, կառուցման փուլում է գտնվում ևս 6 փոքր ՀԷԿ՝ 22540,7 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա մոտ 73,6 մլն.կվտժ – ով:

Մարզի ամենախոշոր՝ Որոտան գետը, որի ջրերն ըստ հանքայնացման քաղցրահամ են, սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի փոքր լճերից և աղբյուրներից և ՀՀ սահմաններից դուրս թափվում Արաքս գետը: Գետի ընդհանուր երկարությունը 178 կմ է (ՀՀ սահմաններում՝ 111 կմ, ջրահավաք ավազանի ընդհանուր մակերեսը՝ 5650 կմ², որից 2596 կմ² –ը՝ ՀՀ տարածքում: Որոտան գետի ամենախոշոր վտակը Սիսիան գետն է:

Որոտանի ջրավազանի ջրերի օգտագործելի ջրային ռեսուրսների ծավալը կազմում է 618,9 մլն.մ³, էկոլոգիական թողքը՝ 207,2 մլն.մ³, որի մեջ հիդրոէներգետիկական կազմում է 95,87%, ռոռզումը՝ 1,65%⁵: Ըստ Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանի՝ նախատեսվում է մինչև 2040 թվականը հիդրոէներգետիկ նպատակներով օգտագործվող ջրի կրճատման հաշվին բարձրացնել ռոռզման նպատակով օգտագործվող ջրի մասնաբաժինը: Դրան ուղղված միջոցառումներից նշվում են հետևյալ գործողությունների իրականացումը՝ ՓՀԷԿ-երի ՋԹ-ներով սահմանված ջրօգտագործման պայմանների վերանայում՝ ներառյալ ջրառի ծավալը և ռեժիմը, համապատասխանեցում բնապահպանական պահանջներին, ջրօգտագործման թույլտվությունների պայմանների իրականացման հսկողության և վերահսկողության մեխանիզմների հզորացում՝ ներառյալ ջրասակավ սեզոններին ջրօգտագործողների միջև ջրի բաշխման մեխանիզմների սահմանումը և ջրօգտագործման օպտիմալացումը, ինքնամոնիթորինգի իրականացման մեխանիզմների մշակում, ընդունում և կիրարկում՝ ջրօգտագործողների հաշվետվողականության բարելավման և ջրօգտագործման, ջրահեռացման և ջրային ռեսուրսների աղտոտման փաստացի տվյալների համալրման նպատակով, կլիմայի փոփոխության հարմարվողականության ներառում մարզային զարգացման ծրագրերում, «ՓՀԷԿ-ների կառուցման և շահագործման համար արգելված գոտիները՝ հատուկ պահպանվող տարածքները, անտառային տարածքները, սողանքային գոտիները, ջրաբանական խոցելի տարածքները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը: Այս միջոցառումներից, սակայն մինչև հիմա, միայն ՀՀ Ջրային օրենսգրքում կատարվել են որոշակի փոփոխություններ և 2021 թվականի ապրիլի 8-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության

⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=106124>

	յան անվանումը	րը, որի վրա տեղակայված է հիդրոէլեկտրակայանը	տարածքում գտնվում է հիդրոէլեկտրակայանը	կՎտ	ի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումը, մլն. կվտ ժ	Արտադրված էլեկտրաէներգիայի ապրանքային արժեքը, հազ. դրամ	Արտադրված էլեկտր. քանակությունը, կվտ/ժամ	գիայի քանակությունը, կվտ. ժամ աղբյուր ⁶
«Ապրես»	«Սյունիք» ՍՊԸ	Որոտան	Ույծ	1500	8,8	234842,4	8,242,700	6,395,376
«Բշխանասար»	Միեգերք» ՍՊԸ	Որոտան	Աղիտու	2063,9	14,7	386294,8	13,367,300	10,015,158
«Սմբուլ»	«Սմբուլ» ՍՊԸ	«Սմբուլի ջուր»	Անգեղակոթ	110	0,9	20815,5	864,500	585,206
«Մանուկ»	«Սմբուլ» ՍՊԸ	Վարդան Ջորավար աղբյուր	Անգեղակոթ	38	0,0	517,8	21,500	11,944
«Անգեղակոթ»	«Ժ ԵՎ Կ ՀԷԿ» ՍՊԸ	«Ջաղացի աղբյուր»-ի խմելու ջուր	Անգեղակոթ	150	0,5	11099,1	461,000	300,663
«Գետափ»	«Ֆիրմա Գ.Ա.Խ» ՍՊԸ	Որոտանի Արագիլ վտակ	Շաղատ	3469	1,2	128159,2	4,469,500	2,950,786
«Շաղատ»	«Շաղատ» ՍՊԸ	Որոտանի Արագիլ վտակ	Շաղատ	55	0,2	2777,3	116,100	83,857
«Այրի»	«Ջորաքար» ՓԲԸ	Որոտանի Այրի վտակ	Նժդեհ	1280	2,4	64562,4	2,695,300	1,977,193
«Դաստակերտ»	«Բասա շին» ՍՊԸ	Այրիի վտակ Կըշկոշտի	Դաստակերտ	1404,0	1,2	32848,0	1,374,600	1,028,137
«ԶՈՐ-ԶՈՐ ՀԷԿ-1»-	«Պարզև և Վարդան» ՍՊԸ	Որոտանի Վաղուղ վտակի	Վաղատին	280	1,1	26136,3	1,086,400	718,247
«ԶՈՐ-ԶՈՐ-2»	«Էներգոձոր» ՍՊԸ	Որոտանի Վաղուղ	Վաղատին	140	0,5	15681,4	543,500	392,838

⁶ <https://setcenter.am/uploads/pages/6/b7820cdc8f5a79310ad9141100474643.pdf>

		վտակի						
«Դարբաս»	«Աֆամիա» ՍՊԸ-	Որոտանի Լորաձոր վտակ	Դարբաս	904	2,2	51671,3	4,026,500	1,196,344
«Լեռնաշեն-1»	«Գուրգեն-Մհեր» ՍՊԸ	Որոտանի Լեռնաշեն վտակ	Շենաթաղ	719,3	1,5	34854,8	1,456,400	1,101,190
«Լոր շէԿ-1»	«Վեհ Լորեն» ՍՊԸ	Որոտանի Լորաձոր վտակ	Լոր և Շենաթաղ	991	1,5	44482,0	1,858,500	1,216,772
«Արևիս-1»	«Աքսատի» ՍՊԸ	Սիսիան գետի Գիծ վտակ	Արևիս և Թասիկ	1259,4	2,5	71471,1	2,486,400	1,858,57
«Բենգար էներջի»	«Բենգար էներջի» ՍՊԸ	Որոտանի Զոր- Զոր վտակի	Որոտան և Վաղատի ն	279	0,9	23152,3	885,800	875,766
«Հակոբջան և Գալստյան» ՍՊԸ	«Շաքի»	Շաքի գետ	Շաքի	840	3,8	86675,8	4,004,800	2,777,968
«Քոնթուր Գլորալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ	Որոտան հիդրոկա սկադ	Որոտան գետ և նրա վտակներ	Գորիս և Սիսիան համայնքն եր	404.2 մՎտ	1, 16 մլրդ կՎտ. ժա	17027705, 9	983,643,900	345,524,799
«Վ.Ա.Լ. ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ	«Վ.Ա.Լ.» ՓՀԷԿ	Գորիս (Վարար ակ)	Գրիս	200	0,4	10064,6	348,700	176,399
«Հակոբջան և Գալստյան ի ՀԷԿ» ՍՊԸ	«Որոտնա ՀԷԿ»	Որոտան	Որոտան	1200	8,0	239810,0	8,301,000	5,673,440
«Կարալեվ աս» ՍՊԸ	«Սեկա»	Գորիս գետի (Վարար ակն)	Գորիս	1040	6,5	194120,0	6,735,800	4,215,048
«Քարահու նջ ՀԷԿ» ՍՊԸ	«Քարահու նջ»	Գորիս գետի (Վարար ակն)	Գորիս	1660	8,4	241870,0	8,380.800	5,296.81
«Խ և Մ ընկերներ» ՍՊԸ	«Վարար ակն»	Վարարկ ն (Գորիս)	Գորիս	780	4,0	128693,5	4,457,000	2.824,81

Որոտան գետի ջրի ծավալի մեծ մասը (մոտ 85%) հիդրոէներգետիկ նպատակով օգտագործվում է Որոտանի հիդրոկասկադի կողմից, որը ներկայումս շահագործվում է հիդրոկասկադի սեփականատեր հանդիսացող «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն:

Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգը բաղկացած է 3 էլեկտրակայաններից, որոնք տեղաբաշխված են Որոտան գետի վրա, Սյունիքի մարզի Սիսիան և Գորիս համայնքների վարչական տարածքում և օգտագործում են ինչպես Որոտան գետի, այնպես էլ վտակների ջրերը: Հիդրոէլեկտրակայանների համակարգը կազմված է՝ «Սպանդարյան» (76 ՄՎտ), «Շամբ» (171 ՄՎտ) և «Տաթև» (157.2 ՄՎտ) ՀԷԿ-երից, որոնց գումարային տեղակայված հզորությունը կազմում է 404.2 ՄՎտ, տարեկան նախագծային արտադրանքը՝ 1.16 մլրդ կՎտ.ժամ: Համակարգում արտադրվում է հանրապետության հիդրոէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի մոտ 60%-ը, իսկ ամբողջ արտադրված էլեկտրաէներգիայի՝ շուրջ 15%-ը:

«Որոտանի ՀԷԿ-երի համակարգ»-ի կազմում ընդգրկված են նաև 5՝ Սպանդարյանի, Շամբի, Տաթևի, Տոլոբսի, Անգեղակոթի ջրամբարները և մեկ օրական կարգավորման ջրամբարը: 1970թ. դեկտեմբերին շահագործման է հանձնվել համակարգի առաջնեկը՝ «Տաթև» ՀԷԿ-ը, 1978թ.՝ «Շամբ» ՀԷԿ-ը, իսկ 1989թ.՝ «Սպանդարյան» ՀԷԿ-ը:

Համակարգի հիդրոէլեկտրակայանների ընդհանուր սխեման ունի հետևյալ տեսքը. համակարգի գլխամասային Սպանդարյան ջրամբարից ճնշման թունելով ջուրը հասնում է «Սպանդարյան» ՀԷԿ: ՀԷԿ-ից ներքև կառուցված է Անգեղակոթի պատվարը, որը կազմավորում է Անգեղակոթի ջրամբարը: Այս ջրամբարից ոչ ճնշման թունելով ջուրը տեղափոխվում է Սիսիան և Այրի վտակների վրա կազմավորված Տոլոբսի ջրամբար: Տոլոբսի ջրամբարից ճնշման թունելով ջուրը տրվում է «Շամբ» ՀԷԿ: Կայանից ներքև կառուցված է Տաթև ջրամբարը՝ Մարգարտաձաղկի տեսք ունեցող հազվագյուտ ջրթափ կառույցով: Տաթևի ջրամբարից ոչ ճնշման թունելով ջուրը հասնում է օրվա կարգավորման ջրավազան, որտեղից էլ տուրբինային խողովակաշարով՝ «Տաթև» ՀԷԿ:

Նախկինում հիդրոկասկադը հանդիսացել է ՀՀ պետական սեփականություն: ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «Էներգետիկայի բնագավառում տեխնիկական օգնության և դրամաշնորհային ծրագրերով նախատեսված սարքավորումների տնօրինումը կանոնակարգելու մասին» N 581-Ա որոշմամբ հանձնարարվել է «2000 թ. Տասիս ծրագրի» շրջանակներում իրականացվող «Հայաստանի միջուկային էներգիայի փոխարինումը երկրի հիդրոէներգետիկայի զարգացման միջոցով» ծրագրի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող սարքավորումների ներդրումը «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման ճանապարհով⁷:

⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74458>

ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի նիստի N 35 արձանագրային որոշման⁸ համաձայն՝ նախատեսվել է վերանորոգել ու վերազինել Որոտանի ՀԷԿ-երի համալիրը: Որոտանի ՀԷԿ-երի համալիրի վերազինման ծրագիրն իրականացնելու համար ՀՀ կառավարության և Գերմանական KfW բանկի միջև կնքվել է (BMZID 2007.65.909 առ 20.10.2010թ.) վարկային համաձայնագիր:

ՀՀ կառավարության 21.11.2013թ. N°1496-Ա որոշմամբ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գույքային համալիրի հիմնական մասն օտարվել է «Քոնթուր Գլոբալ ՀիդրոԿասկադ» ՓԲԸ-ին: Սակայն այդ որոշման նախագիծն ընդգրկված չի եղել ՀՀ կառավարության 2013թ-ի նոյեմբերի 21-ի նիստի օրակարգում: Այդ մասին չի հիշատակվել նաև ՀՀ կառավարության տվյալ օրվա նիստի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրության մեջ⁹: Հանրությունը Որոտանի կասկադի վաճառքի վերաբերյալ տեղեկացվել է միայն 2014թ-ի հունվարին՝ որոշման ընդունումից երկու ամիս անց¹⁰: Իսկ 2015 թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել վերակնքել պայմանագիրն ամերիկյան «Contour Global» ընկերության հետ՝ 51 մլն եվրո վարկի մնացած մասով ամերիկյան ներդրողների պարտավորությունները հստակեցնելու նպատակով: 2015 թվականի օգոստոս 12-ին Ամերիկյան «Contour Global» ընկերությունը և Հայաստանի Հանրապետությունը հայտարարեցին Որոտանի կասկադի ակտիվները 180 մլն դոլարով ձեռքբերելու գործարքի ավարտի մասին: Ընկերությունը ստացել է Որոտանի կասկադ-ի երեք ՀԷԿ-երը 25 տարով շահագործելու լիցենզիա, 404.2 ՄՎտ ընդհանուր հզորությամբ¹¹:

Ըստ աղբյուրի¹² Որոտանի ՀԷԿ-ը վաճառվել է հենց Հայաստանում գրանցված ««ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ»» ՓԲԸ-ին: Այս ընկերությունը Հայաստանում գրանցվել է 2013 թվականի հուլիսի 16-ին՝ 100 հազար դրամ կանոնադրական կապիտալով: Ընկերության հիմնադիրը Լյուքսեմբուրգում է գրանցված (ի դեպ, օֆշորային գոտի է), «ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՏԵՐՐԱ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ն է (100% բաժնետեր): Սակայն 2013թ. հոկտեմբերի 15-ին բաժնետերը փոխվել է և դարձել «Մի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» ընկերությունը: Ընկերությունը գրանցված է ԱՄՆ Դելավեր նահանգի Վիլմինգտոն քաղաքում: Դելավերը նույնպես օֆշորային գոտի է: Ի դեպ, Լյուքսեմբուրգում գրանցված «ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՏԵՐՐԱ ՀՈԼԴԻՆԳՍ ՍՊԸ-ն էլ է պատկանում նույն «Մի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի»-ին:

Որոտանի կասկադի գինը սահմանվել էր 180 միլիոն ԱՄՆ դոլար: Այս գործարքն առաջացրեց հասարակության վրդովմունքը, քանի որ, այն իրականացվել է ՀՀ ջրային օրենսգրքի խախտմամբ, իսկ պայմանագրի պայմաններն այնպիսին են, որ մասնավոր

⁸ <https://www.e-gov.am/protocols/item/691/>

⁹ <https://www.gov.am/am/news/item/10866/>

¹⁰ <https://transparency.am/files/publications/1596280678-0-532054.pdf?v=4>

¹¹ https://finport.am/full_news.php?id=34506&lang=1

¹² <https://www.yerkir.am/news/view/64194.html>

ընկերությունը կարող է գրավադրել հիդրոկասկադի մեջ մտնող ջրամբարների պատվարները, ինչը նշանակում է, որ ընկերությունն առանց վերահսկողության կարող է ըստ հայեցողության տիրապետել Հայաստանի ռազմավարական ջրային ռեսուրսները: Կլիմայի փոփոխության պայմաններում 2021թ. Հայաստանում ջրի սով է: Այս իրավիճակում ջրամբարների մոնիտորինգը շատ կարևոր է ջրային ռեսուրսների նպատակային օգտագործման համար: Ի տարբերություն այլ խոշոր ջրամբարների, Որոտանի հիդրոհամալիրի ջրամբարների լցվածության տվյալները չեն հրապարակվում և փակ են շահագրգիռ կողմերի համար:

Այսպիսով՝ 2015 թվականի օգոստոսից **ամերիկյան «Քոնթուր Գլոբալ» ընկերությունը նախկին «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲ ընկերության սեփականատերն է:** Ըստ ընկերության գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանի՝ ընկերությունն աշխարհի ավելի քան 20 տարբեր երկրներում էներգետիկայի ոլորտում կատարում է ներդրումներ՝ հիմնականում գնում, կառուցում, վերազինում և շահագործում է էներգիա արտադրող օբյեկտներ, ջերմային էլեկտրակայաններ, հիդրոէլեկտրակայաններ, արևային և հողմային էներգիա արտադրող կայաններ, այսինքն, համարյա ամեն տեսակի, բացի ատոմակայաններից¹³:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2015 թվականի հունիսի 17-ի նիստում հավանություն է տվել ամերիկյան «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին Սյունիքի մարզի «Սպանդարյան», «Շամբ» և «Տաթև» հիդրոէլեկտրակայաններում՝ «Որոտան» ՀԷԿ-երի կասկադում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու որոշման նախագծին՝ 25 տարի գործողության ժամկետով: Որոշումն ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից: Լիցենզավորված անձի փաստացի տեղակայված հզորությունը կազմում է 404,2 ՄՎտ: Առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը կկազմի 4,562 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5,474 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը¹⁴:

Ըստ ընկերության տնօրենի՝ առ 2021թ. օգոստոս ամիսը ընկերությունը ընդհանուր առմամբ մոտ 70 մլն դոլարի ներդրում է կատարել՝ կասկադի մոդեռնիզացման և վերակառուցման ուղղությամբ՝ համաձայն ՀՀ կառավարության հետ ժամանակին ձեռք բերված համաձայնության՝ գործարքի շրջանակներում:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2018 թվականի մայիսի 8-ի նիստում քննարկել է «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին հարցը:

Հանձնաժողովը հավանություն է տվել որոշման նախագծին, որի արդյունքում «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագիրը կազմել է 1 680,2 մլն դրամ (առանց ԱԱՀ): Ներդրումային ծրագիրը հիմնականում միտված է ՀԷԿ-

¹³ <https://syuniacyerkir.am/ara-hovsepyan>

¹⁴ <https://www.panarmenian.net/arm/news/193909/>

երի անխափան աշխատանքի ապահովմանը և անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանը: Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ՝ ընկերության բոլոր ջրամբարների անվտանգության մակարդակի, տուրբինային սրահների տեխնիկական վիճակի գնահատման, շրջակա միջավայրի պահպանության, տեխնիկական անվտանգության ոլորտի, ինչպես նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղություններով¹⁵: Ըստ նույն աղբյուրի՝ Որոտանի կասկադ ՀԷԿ-ի գույքային համալիրը, որը ամերիկյան Contour Global Hydro Cascade ընկերության սեփականությունն է, վարկային ռեսուրսների ներգրավման նպատակով գրավադրվել է: Ընկերության 100% բաժնետոմսերը հավասարաչափ բաշխվել են HSBC Trustee Company, Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC), Նիդեռլանդների զարգացման և ֆինանսների հիմնադրամ (FMO), Գերմանական ներդրումների և զարգացման հիմնադրամ (DEG) ֆինանսական կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության միջև: Գույքի գրավադրումը թույլ է տվել ներգրավել լրացուցիչ 150 մլն եվրո՝ չհաշված կառավարության կողմից գերմանական KfW բանկից ներգրավված 51 մլն եվրոն մինչև Կասկադն ամերիկյան ընկերությանը վաճառելը:

Ըստ արխիվային փաստաթղթերի՝ Որոտանի հիդրոկասկադում 2009 թվականին արտադրվել է 1 130 600.0 և առաքել 1 122 200.0 ՄՎտժ հիդրոէներգիա, իսկ ըստ աղբյուրի¹⁶ «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն 2017 թվականին արտադրել է 934558255 կվտժ էլեկտրաէներգիա: Համաձայն աղբյուրի⁶ 2019թ. արտադրել է 983643900 կվտժ, իսկ 2020թ. ութ ամսում՝ 345524798 կվտժ էլեկտրաէներգիա:

Ըստ ընկերության ներկայացուցիչների՝ «Քոնթուր Գլոբալ» ընկերությունն իր կորպորատիվ սոցիալական ներդրումների ռազմավարությանը համահունչ պարտավորվել է ամեն տարի ընկերության ազդակիր համայնքներում իրականացնել կորպորատիվ սոցիալական ծրագրեր՝ որոշակի բյուջեի շրջանակներում: Օրինակ՝ 2016 թվականին իրականացվել են՝ Գորիսի պետական համալսարանում լաբորատորիայի հիմնում, Գեղազիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղում ջեռուցման համակարգի անցկացում, Շաղատում՝ մանկապարտեզի տանիքի նորոգում, Անգեղակոթում՝ մշակույթի կենտրոնին կից զբոսայգու վերակառուցում, խմելու ջրի ցանցի նորոգման համար Որոտանում՝ 800 մետր, Տոլորսում՝ 135 մետր պոլիէթիլենային խողովակների տրամադրում ու երկու կապտածի վերանորոգում (Տոլորս)¹⁷: 2017թ. համար նախատեսվել էր հինգ սոցիալական ծրագիր: Արդեն ավարտվել են Գորիսի Գրիգոր Տաթևացու փողոցում ֆուտբոլի դաշտի կառուցման, Դարբասի միջնակարգ դպրոցում «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծման ծրագրերը: Բոնակոթի միջնակարգ դպրոցում «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության հետ համատեղ ինժեներական լաբորատորիայի ստեղծման գործում ընկերությունը հանդես է եկել

¹⁵ https://finport.am/full_news.php?id=34506&lang=1

¹⁶ https://energyagency.am/page_pdf/hidroenergetika

¹⁷ <https://syuniacyerkir.am/qontur-global>

համապատասխան դասասենյակի վերանորոգման ծրագրով: Մյուս երկու ծրագրերն էին՝ Ծղուկ համայնքի արտաքին լուսավորության ցանցի ստեղծումը և Գորիսի «Մյունիք» պարային համույթին ազգագրական հագուստի տրամադրումը: Սոցիալական ծրագրերն իրականացվում են ընկերության 15 ազդակիր բնակավայրում: Իսկ «Մյունաց Երկիր» էլեկտրոնային թերթին 2021 թվականի սեպտեմբերի 12-ին տված հարցազրույցում ընկերության տնօրեն Արա Հովսեփյանը նշել է, որ սոցիալական ծրագրերով նախատեսվում է տարեկան մոտ 80-100 հազար դոլարի սահմաններում: Միաժամանակ, զանազան այլ ծրագրեր են իրականացնում տարբեր բնակավայրերում, հիմնականում նրանցում, որոնք գտնվում են իրենց գործունեության շառավղում: Համաձայն տնօրենի՝ շուտով Գորիսում կբացվի Ամերիկյան համալսարանի կրթական կենտրոնը, որտեղ առաջին փուլում կմատուցվեն Ամերիկյան համալսարանի կարճաժամկետ նեղ մասնագիտական դասընթացներ, որը լավ սկիզբ կհանդիսանա Գորիսում և Մյունիքում Ամերիկյան համալսարանի հիմնավոր ներկայությունն ապահովելու համար ¹⁸:

«Մյունաց Երկիր» էլեկտրոնային թերթին տված հարցազրույցում¹⁹ «Քոնթուր Գլոբալ Հիդրոկասկադ» ՓԲ ընկերության շրջակա միջավայրի պաշտպանության և սոցիալական պատասխանատվության գծով ղեկավար Արմեն Բողոյանն անդրադարձել է ՀԷԿ-երի շահագործման և վերազինման ծրագրի ժամանակ առաջացող հնարավոր բնապահպանական ռիսկերին և այդ ռիսկերի չեզոքացմանը միտված գործընթացներին, որոնք են՝

1. Արտադրության ընթացքում կամ վերազինման, վերանորոգման աշխատանքների ժամանակ թափոնների գոյացման և արդեն որոշ հնացած սարքավորումների և թափոնների տեսքով դրանց դուրսգրումը
2. Օգտագործված յուղերի կառավարում («Այս պահին ունենք ՀՀ բնապահպանության նախարարության հաստատած 11 թափոնի անձնագրերը, որոնցից ամենավտանգավորը՝ որպես այդպիսին, օգտագործված արտադրական մարտկոցներն են, որոնք դեռևս դուրս չեն եկել արտադրությունից: Վերազինման ծրագրի շրջանակներում հնարավոր թափոնների գոյացման ցանկում ընդգրկված են նաև օգտագործված մալուխների որոշակի քանակություն, մետաղի ջարդոն (հին սարքավորումների մասերի տեսքով), օգտագործված լամպեր և այլն, որոնք պետք է փոխարինվեն նորերով վերոնշյալ ծրագրի շրջանակներում: Բնապահպանության նախարարությունը վերոնշյալ թափոնները դասում է 1-4 դասի վտանգավորության թափոնների շարքին, որոնք սխալ պահպանման և պահեստավորման դեպքում կարող են բնապահպանական խնդիրներ առաջացնել, սակայն ՔԳՀԿ ընկերությունը, առաջնորդվելով միջազգային նորմերով և պահանջներով, նախապես պլանավորել է դրանց պահեստավորումն ու պահպանումը: Համապատասխան պահեստների կառուցման նախագիծն ընթացքի մեջ է և առաջիկա մեկ-երկու ամսում պատրաստ կլինի»)

¹⁸ <https://syuniacyerkir.am/ara-hovsepyan>

¹⁹ <https://syuniacyerkir.am/qontur-global->

3. Ասբեստ պարունակող նյութերի ուսումնասիրություն (գրանցվել են բոլոր այն սարքավորումներն ու միջոցները, որոնք պարունակում են ասբեստ, որն առողջության համար վտանգավոր է: Կա երկու տեսակի ասբեստ՝ փխրուն և ոչ փխրուն: «Բարեբախտաբար, մեր ՀԷԿ-երում չկան փխրուն ասբեստ պարունակող նյութեր, սարքավորումներ, իսկ ոչ փխրուն ասբեստ պարունակողները նույնականացրել ենք, տեղադրել նախագգուշացնող նշաններ: Ասբեստ պարունակող չշահագործվող սարքավորումները տեղադրվել են «Շամբ» ՀԷԿ-ում այդ նպատակով կառուցված պահեստում և, անհրաժեշտ բոլոր միջազգային սահմանված ընթացակարգերով անցնելով, ժամանակի ընթացքում կհեռացվեն և կհանձնվեն համապատասխան լիցենզիա ունեցող ընկերությանը: Սա, ի դեպ ՀՀ-ում նորություն է»)

4. Ջրամբարներում մաքրման կայանների, ձկնապաշտպան կառույցների, բիոսանհանգույցների տեղադրումը (Բիոսանհանգույցներն արդեն տեղադրվել են, իսկ ձկնապաշտպան կառույցների տեղադրումը բավականին աշխատատար գործընթաց է: Ա.Բողոյանի տեղեկացմամբ՝ նախագծային աշխատանքներ իրականացնող կապալառու ընկերությունը որպես ենթակապալառու վարձել է ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի աշխատակիցներին, ովքեր արդեն ավարտել են դաշտային աշխատանքները, և կենսաբազմազանության, ձկնատեսակների հետ կապված եզրակացություններ տալուց հետո կսկսվեն բոլոր ջրամբարներում (Անգեղակոթ, Սպանդարյան, Շամբ, Տոլորս) ձկնապաշտպան կառույցների տեղադրման նախագծային աշխատանքները: Նախատեսում են նախագծային աշխատանքներն ավարտել 2017թ. հոկտեմբեր ամսին)²⁰:

Ե գ ր ա կ ա ց ու թ յ ո ն ւ ն

1. Շարունակվում է մարզի ջրային ռեսուրսների հյուծումը:
2. Ոռոգման սեզոնին չի պահպանվում հիդրոէներգետիկ և ոռոգման նպատակներով օգտագործվող ջրային ռեսուրսների ծավալների համամասնությունը:
3. Հիդրոէկոլոգիայի կողմից ջրային ռեսուրսի բնապահպանական թողքի սահմանված չափաքանակները հիմնականում չեն պահպանվում:
4. Համապատասխան իրավական ակտով կարգավորված չէ ջրասակավ սեզոններին ջրօգտագործողների միջև ջրի բաշխման մեխանիզմների կանոնակարգումը:
5. Հիդրոէկոլոգիայի կողմից ջրային ռեսուրսի բնապահպանական հսկողության և վերահսկողության մեխանիզմներն արդյունավետ չեն:
6. Հիդրոէկոլոգիայի կողմից ջրառի և բնապահպանական թողքի նկատմամբ ինքնամոնիթորինգ չի իրականացվում:
7. Հիդրոէկոլոգիայի կողմից ջրօգտագործողները հաշվետու չեն շահառուների, հատկապես ազդակիր բնակչության նկատմամբ:
8. Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործողությունները բավարար չեն գլոբալ տաքացման արդյունքում ջրային հոսքերի նվազման և ջրերի որակի փոփոխության կանխարգելման համար:

9. Ի տարբերություն այլ խոշոր ջրամաբարների, Որոտանի հիդրոհամալիրի ջրամբարների լցվածության տվյալները չեն հրապարակվում, դրանք հասանելի չեն շահագրգիռ կողմերին:
10. Լուծված չեն հիդրոէլեկտրակայանների շահագործման ժամանակ գոյացող տրանսֆորմատորային և այլ կարգի յուղերի (1-4 վտանգավորության դասի թափոններ) անվտանգ հավաքման, պահեստավորման և դրանց չեզոքացման ու վնասագերծման հարցերը:
11. Որոտանի հիդրոկասկադի տեխնիկական վերազինման բնապահպանական ծրագրով նախատեսված՝ Անգեղակոթ, Սպանդարյան, Շամբ, Տոլորս ջրամբարներում ձկնապաշտպան կառույցները չեն տեղադրվել:
12. ՓՀԷԿ-երի ձկնանցարանների և ձկնապաշտպան ցանցերի մեծ մասն, ըստ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի հետազոտությունների,²¹ ֆունկցիոնալ առումով չեն համապատասխանում ձկնաշխարհի կենսաբազմազանության և տեղաբնակ ձկնատեսակների վտանգների քանակական ցուցանիշների պահպանմանը, ինչի հետևանքով դրանք կրել են բացասական փոփոխություններ:
13. ՓՀԷԿ-երը շահագործող կազմակերպությունները ՓՀԷԿ-երի գործունեության ազդակիր համայնքներին չեն ցուցաբերում սոցիալ-տնտեսական օժանդակություն:

²¹ <https://www.ecolor.org/files/uploads/shppreport2018new.pdf>